

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Մոսկվա, 2010 թվականի դեկտեմբերի 9)

Բելառուսի Հանրապետության Կառավարությունը, Ղազախստանի Հանրապետության Կառավարությունը եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

հիմնվելով «Մաքսային միության մասին» Ռուսաստանի Դաշնության եւ Բելառուսի Հանրապետության միջեւ 1995 թվականի հունվարի 6-ին կնքված համաձայնագրի, «Մաքսային միության մասին» 1995 թվականի հունվարի 20-ի համաձայնագրի, «Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի մասին» 1999 թվականի փետրվարի 26-ի պայմանագրի, «Եվրասիական տնտեսական համայնք հիմնելու մասին» 2000 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագրի, «Միասնական մաքսային տարածքի ստեղծման եւ Մաքսային միության ձեւավորման մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի պայմանագրի վրա,

ձգտելով միասնական սկզբունքների ու կանոնների հիման վրա իրականացնել բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման համաձայնեցված քաղաքականություն,

համաձայնեցին հետեւյալի մասին.

ԲԱԺԻՆ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Համաձայնագրի նպատակը

Սույն Համաձայնագրի նպատակն է ստեղծել իրավական հիմքեր Կողմ հանդիսացող պետությունների բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման միասնական սկզբունքների ու ընդհանուր կանոնների ձեւավորման ու սահմանման համար՝ բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից ծառայությունների մատչելիությունն ապահովող սպառողների, բնական մենաշնորհի սուբյեկտների ու հասարակության շահերի հավասարակշռությունը, Կողմ հանդիսացող պետություններում բնական մենաշնորհի սուբյեկտների աշխատանքի եւ զարգացման արդյունավետությունը, ինչպես նաեւ դրանց հիման վրա՝ բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման ոլորտում Կողմերի ազգային օրենսդրության ներդաշնակեցումն ապահովելու համար:

Հոդված 2

Համաձայնագրում օգտագործվող տերմինների սահմանումը

Սույն Համաձայնագրի նպատակներով օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

ներքին շուկա՝ Կողմ հանդիսացող պետության շուկա, որում շրջանառվում են բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունները,

բնական մենաշնորհ՝ ծառայությունների շուկայի վիճակ, որի դեպքում ծառայությունների որոշակի տեսակի պահանջարկի բավարարման նպատակով մրցակցային պայմանների ստեղծումն անհնար է կամ տնտեսական տեսանկյունից նպատակահարմար չէ՝ արտադրության տեխնոլոգիական առանձնահատկությունների ու ծառայության տվյալ տեսակի մատուցման պատճառով,

սպառող՝ քաղաքացիական իրավունքի սուբյեկտ (ֆիզիկական կամ իրավաբանական անձ), որն օգտվում է կամ մտադիր է օգտվել բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից մատուցվող ծառայություններից,

բնական մենաշնորհի սուբյեկտ՝ Կողմերի ազգային օրենսդրությամբ սահմանված բնական մենաշնորհի ոլորտներում ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտ,

ծառայությունների մատուցում՝ ծառայությունների մատուցում (տրամադրում), քաղաքացիական շրջանառության օբյեկտ հանդիսացող ապրանքների արտադրություն (իրացում),

տնտեսավարող սուբյեկտ՝ իր անունից առևտրատնտեսական գործունեություն իրականացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձ,

բնական մենաշնորհի ոլորտ՝ օրենսդրությամբ բնական մենաշնորհին դասված ծառայության շրջանառության ոլորտ, որում սպառողը կարող է օգտվել բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններից,

Կողմերի ազգային օրենսդրություն՝ Կողմ հանդիսացող յուրաքանչյուր պետության՝ բնական մենաշնորհի ոլորտին առնչվող օրենսդրություն,

Կողմերի ազգային մարմիններ՝ Կողմ հանդիսացող պետության մարմիններ, որոնք իրականացնում են բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորումը եւ (կամ) վերահսկողությունը,

ոլորտային (ճյուղային) համաձայնագրեր՝ Կողմ հանդիսացող պետությունների՝ սույն Համաձայնագրի 1-ին հավելվածում նշված բնական մենաշնորհի ոլորտին առնչվող միջազգային պայմանագրեր՝ ներառյալ Կողմերի երկկողմանի միջազգային պայմանագրերը,

բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիություն՝ Կողմ հանդիսացող մեկ պետության բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից բնական մենաշնորհի ոլորտին դասվող ծառայությունների մատուցում Կողմ հանդիսացող մյուս պետության սպառողներին այնպիսի պայմաններով, որոնք առավել բարենպաստ չեն, քան Կողմ հանդիսացող առաջին պետության սպառողներին, տեխնիկական հնարավորության առկայության դեպքում, նմանատիպ ծառայություն տրամադրելու պայմանները:

Հոդված 3

Համաձայնագրի կիրառության ոլորտը

1. Սույն Համաձայնագիրը կիրառվում է Կողմ հանդիսացող պետությունների միջև առևտրի վրա ազդող եւ սույն Համաձայնագրի 1-ին հավելվածում նշված բնական մենաշնորհի ոլորտում Կողմ հանդիսացող պետությունների բնական մենաշնորհի սուբյեկտների, սպառողների, գործադիր իշխանության մարմինների եւ տեղական ինքնակառավարման մարմինների հարաբերությունների նկատմամբ:

2. Սույն Համաձայնագրի կիրառման առանձնահատկությունները բնական մենաշնորհի կոնկրետ ոլորտներում, այդ թվում՝ բնական մենաշնորհի սուբյեկտների մասով Միասնական տնտեսական տարածքի ձեւավորման փուլայնությունը, սահմանվում են համապատասխան ճյուղային (արդյունաբերական) համաձայնագրերով:

3. Կողմ հանդիսացող պետություններում բնական մենաշնորհի ոլորտին դասվում են նաեւ սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածում նշված բնական մենաշնորհի ոլորտները

Սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածում նշված բնական մենաշնորհի ոլորտների նկատմամբ կիրառվում են Կողմերի ազգային օրենսդրությամբ սահմանված պահանջները:

4. Բնական մենաշնորհի ոլորտներին դասվող բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների ցանկը սահմանվում է Կողմերի ազգային օրենսդրությամբ:

5. Կողմերը ձգտում են սույն Համաձայնագրի 1-ին եւ 2-րդ հավելվածներում նշված բնական մենաշնորհի ոլորտների ներդաշնակեցմանը՝ դրանց կրճատման միջոցով եւ ճյուղային (արդյունաբերական) համաձայնագրերում անցումային շրջանի հնարավոր սահմանմամբ:

6. Կողմ հանդիսացող պետությունների բնական մենաշնորհի ոլորտների ընդլայնումն իրականացվում է.

– Կողմերի ազգային օրենսդրության համաձայն, եթե Կողմ հանդիսացող պետությունը մտադիր է բնական մենաշնորհի ոլորտին դասել այն ոլորտը, որը Կողմ հանդիսացող այլ պետությունում բնական մենաշնորհի ոլորտ է եւ նշված է սույն Համաձայնագրի 1-ին եւ 2-րդ հավելվածներում,

Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ, եթե Կողմ հանդիսացող պետությունը, Մաքսային միության հանձնաժողովին համապատասխան կերպով դիմելուց հետո, մտադիր

է բնական մենաշնորհի ոլորտին դասել բնական մենաշնորհի այլ ոլորտ, որը նշված չէ սույն Համաձայնագրի 1-ին եւ 2-րդ հավելվածներում:

7. Սույն Համաձայնագիրը չի տարածվում Կողմերի միջեւ գործող երկկողմանի միջազգային պայմանագրերով կարգավորվող հարաբերությունների վրա: Կողմերի՝ նորից կնքվող ոլորտային (ճյուղային) համաձայնագրերը չեն կարող հակասել սույն Համաձայնագրին:

8. «Մրցակցության միասնական սկզբունքների ու կանոնների մասին» Կողմերի համաձայնագիրը կիրառվում է բնական մենաշնորհի սուբյեկտների նկատմամբ՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրով նախատեսված առանձնահատկությունները:

9. Գազի փոխադրման ոլորտը կարգավորվում է «Գազատրանսպորտային համակարգերում գազի փոխադրման ոլորտում բնական մենաշնորհի ծառայությունների հասանելիության, այդ թվում՝ գնագոյացման եւ սակագնային քաղաքականության կանոնների մասին» համաձայնագրով:

ԲԱԺԻՆ 2.

ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 4

Բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման ընդհանուր սկզբունքները

Սույն Համաձայնագրի 1-ին եւ 2-րդ հավելվածներում նշված բնական մենաշնորհի ոլորտներում բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեությունը կարգավորելիս եւ (կամ) վերահսկելիս Կողմերն առաջնորդվում են հետեւյալ սկզբունքներով.

1) Կողմ հանդիսացող պետությունների սպառողների ու բնական մենաշնորհի սուբյեկտների շահերի հավասարակշռության պահպանումը, որն ապահովում է սպառողների համար մատուցվող ծառայությունների հասանելիությունը եւ դրանց որակի պատշաճ մակարդակը, արդյունավետ գործունեությունն ու բնական մենաշնորհի սուբյեկտների զարգացումը,

2) կարգավորման գործընթացի արդյունավետության բարձրացումը՝ ուղղված բնական մենաշնորհի ոլորտների հետագա կրճատմանն այդ ոլորտներում մրցակցության զարգացման պայմանների ստեղծման հաշվին,

3) բնական մենաշնորհի սուբյեկտների ճկուն սակագնային (գնային) կարգավորման կիրառումը՝ ճյուղային առանձնահատկությունների, դրանց գործունեության մասշտաբների, շուկայական պայմանների, միջնաժամկետ (երկարաժամկետ) մակրոտնտեսական եւ ճյուղային կանխատեսումների, ինչպես նաեւ այդ սուբյեկտների սակագնային (գնային) կարգավորման միջոցների հաշվառմամբ, այդ թվում՝ դիֆերենցիալ սակագնի սահմանման հնարավորության օգտագործումը, որը չի կարող սահմանվել՝ համաձայն Կողմ հանդիսացող ցանկացած պետությանը սպառողի (սպառողների խմբի) պատկանելիության սկզբունքի,

4) կարգավորող միջոցների նախաձեռնումն այն դեպքերում, երբ համապատասխան ներքին շուկայի վերլուծության հիման վրա սահմանվում է, որ այդ շուկայում գործում է բնական մենաշնորհ,

5) ներքին շուկաներ մուտքը խոչընդոտող գործոնների կրճատումը, այդ թվում՝ բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիությունն ապահովելու շնորհիվ,

6) բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման ընթացակարգերի կիրառումը, որոնք ապահովում են ընդունվող որոշումների կայացման գործընթացի անկախությունը, անընդհատությունը, հրապարակայնությունը, օբյեկտիվությունն ու թափանցիկությունը,

7) բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից սպառողների հետ այն ծառայությունների տրամադրման վերաբերյալ պայմանագրերի կնքման պարտականությունը, որոնց նկատմամբ կիրառվում է կարգավորումը՝ Կողմերի ազգային օրենսդրության համաձայն սահմանված տեխնիկական հնարավորության առկայության դեպքում,

8) բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից նրանց ծառայությունների հասանելիության կանոնների պահպանման ապահովումը,

9) կարգավորման գործընթացի ուղղվածությունը բնական մենաշնորհի կոնկրետ սուբյեկտին,

10) սահմանվող սակագների (գների) համապատասխանությունը բնական մենաշնորհի այն ոլորտներում մատուցվող ծառայությունների որակին, որոնց դեպքում կիրառվում է կարգավորման գործընթացը,

11) սպառողների շահերի պաշտպանությունը, այդ թվում՝ բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից՝ կարգավորվող ծառայությունների սակագների (գների) կիրառման հետ կապված խախտումներից,

12) այնպիսի տնտեսական պայմանների ստեղծումը, որոնց ներքո ծախքերի կրճատումը, նոր տեխնոլոգիաների ներդնումը, ներդնումների օգտագործման արդյունավետության բարձրացումը շահավետ լինի բնական մենաշնորհի սուբյեկտների համար:

Հոդված 5

Բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման տեսակներն ու մեթոդները

1. Կողմ հանդիսացող պետությունները կիրառում են Կողմ հանդիսացող պետությունների բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման տեսակները (ձեւերը, միջոցները, մեթոդները, գործիքները) սույն Համաձայնագրով սահմանված բնական մենաշնորհի կարգավորման ընդհանուր սկզբունքների ու կանոնների հիման վրա:

2. Բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորումն իրականացնելիս կիրառվում են կարգավորման հետեւյալ տեսակները (ձեւերը, մեթոդները, միջոցները, գործիքները).

1) սակագնային (գնային) կարգավորումը,

2) սույն Համաձայնագրով սահմանված՝ կարգավորման տեսակները,

3) Կողմերի ազգային օրենսդրությամբ սահմանված կարգավորման այլ տեսակներ:

3. Բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների սակագնային (գնային) կարգավորումը՝ ներառյալ բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններում ընդգրկվելու(դրանց միանալու) արժեքի սահմանումը, կարող է իրականացվել հետեւյալ կերպ.

1) ազգային մարմնի կողմից բնական մենաշնորհի սուբյեկտների համար կարգավորվող ծառայությունների սակագների (գների), այդ թվում՝ ազգային մարմնի կողմից հաստատված մեթոդաբանության (բանաձևի) եւ դրա կիրառման կանոնների հիման վրա դրանց առավելագույն մակարդակների սահմանման (հաստատման), ինչպես նաեւ բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից սահմանված սակագների (գների) կիրառման նկատմամբ համապատասխան վերահսկողությունն իրականացնելու միջոցով,

2) ազգային մարմնի կողմից մեթոդաբանության եւ դրա կիրառման կանոնների սահմանման (հաստատման) միջոցով, որի համաձայն, բնական մենաշնորհի սուբյեկտը սահմանում եւ կիրառում է սակագները (գները), ինչպես նաեւ բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից սակագների (գների) սահմանման ու կիրառման նկատմամբ ազգային մարմնի կողմից իրականացվող վերահսկողության միջոցով:

4. Սակագնային (գնային) կարգավորում իրականացնելիս Կողմերի ազգային մարմիններն իրավունք ունեն կիրառելու նաեւ սակագնային (գնային) կարգավորման հետեւյալ մեթոդները կամ դրանց համակցությունները.

1) տնտեսական տեսանկյունից հիմնավորված մեթոդը,

2) ինդեքսավորման մեթոդը,

3) ներդրումային կապիտալի եկամտաբերության մեթոդը,

4) բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության արդյունավետության համեմատական վերլուծության մեթոդը,

5. Սակագները (գները) կարգավորելիս հաշվի են առնվում.

1) բնական մենաշնորհի սուբյեկտներին տնտեսական տեսանկյունից հիմնավորված եւ կարգավորման գործընթացի իրականացման հետ կապված ծախսերի փոխհատուցումը,

2) տնտեսական տեսանկյունից հիմնավորված շահույթի ստացումը,

3) բնական մենաշնորհի սուբյեկտներին ծախսերի կրճատման համար խրախուսումը,

4) բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների սակագների (գների) սահմանումը՝ մատուցվող ծառայությունների հուսալիության եւ որակի հաշվառմամբ:

6. Սակագները (գները) սահմանելիս կարող են հաշվի առնվել.

1) Կողմ հանդիսացող պետությունների տարածքներում բնական մենաշնորհի գործունեության առանձնահատկությունները, այդ թվում՝ տեխնիկական պահանջների ու կանոնակարգերի առանձնահատկությունները,

2) պետական լրավճարները եւ պետական օժանդակության այլ միջոցներ,

3) շուկայական պայմանները, այդ թվում՝ գների մակարդակը շուկայի չկարգավորվող հատվածներում,

4) տարածքների զարգացման նախագծերը,

5) պետական հարկային, բյուջետային, էկոլոգիական ու սոցիալական քաղաքականությունը,

6) էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներն ու էկոլոգիական ասպեկտները:

7. Բնական մենաշնորհի սուբյեկտի ծառայության սակագները (գները) կարգավորելիս հաշվի է առնվում այն փաստը, որ բնական մենաշնորհի սուբյեկտի ծախսերը ձեւավորվում են ծախսերի, այդ թվում՝ ներդրումների ու եկամուտների, գործողության մեջ դրված ակտիվների առանձին հաշվառմամբ՝ ըստ բնական մենաշնորհի սուբյեկտների կարգավորվող ծառայությունների տեսակների:

8. Բնական մենաշնորհի սուբյեկտի ծառայությունների սակագների (գների) կարգավորումը կարող է իրականացվել կարգավորման երկարաժամկետ պարամետրերի հիման վրա, որոնց կարող են դասվել կարգավորվող ծառայությունների հուսալիությունն ու որակը, համապատասխան ծառայությունների մատակարարման հետ կապված ծախսերի փոփոխման դինամիկան, եկամտաբերության նորման, ներդրումային կապիտալի վերադարձի ժամկետները եւ այլ պարամետրեր:

Բնական մենաշնորհի սուբյեկտի ծառայությունների սակագների (գների) կարգավորման նպատակով կարող են կիրառվել նաեւ կարգավորման երկարաժամկետ հարաչափերը, որոնք ստացվում են բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության արդյունավետության համեմատական վերլուծության մեթոդի կիրառման արդյունքում:

9. Սույն հոդվածի դրույթների կիրառման առանձնահատկությունները բնական մենաշնորհի կոնկրետ ոլորտներում կարող են սահմանվել համապատասխան ոլորտային (ճյուղային) համաձայնագրերով:

Կողմերն իրավունք ունեն ոլորտային (ճյուղային) համաձայնագրերով սահմանելու բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների ցանկը եւ (կամ) բնական մենաշնորհի սուբյեկտների ցանկը, որոնց նկատմամբ կարող են կիրառվել Կողմերի կողմից սակագների (գների) սահմանման ու կիրառման մեթոդների (մոտեցումների, մեթոդիկաների) համաձայնեցման հատուկ ընթացակարգերը:

Հոդված 6

Բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիությունն ապահովելու կանոնները

1. Կողմերը պարտավորվում են իրենց ազգային օրենսդրություններով սահմանել կարգավորման կանոններ, որոնցով կապահովվի բնական մենաշնորհի սուբյեկտի ծառայությունների՝ սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածով սահմանված հասանելիությունը:

Յուրաքանչյուր Կողմի ազգային մարմիններն ապահովում են սպառողների համար բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիության կանոնների ու դրանցում ընդգրկվելու (դրանց միանալու, դրանցից օգտվելու) պայմանների պահպանման նկատմամբ վերահսկողությունը:

2. Սպառողների համար բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիության ապահովման կանոնները ներառում են.

1) պայմանագրերի էական պայմանները, ինչպես նաեւ դրանց կնքման ու կատարման կարգը,

2) տեխնիկական հնարավորությունների առկայության սահմանման կարգը,

3) բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների, դրանց արժեքների, հասանելիության, իրականացման հնարավոր ծավալների, այդպիսի ծառայությունների մատուցման տեխնիկական ու տեխնոլոգիական հնարավորությունների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգը,

4) թափանցիկ տեղեկություններ ստանալու պայմանները, որի շնորհիվ շահագրգիռ անձանց համար հնարավոր է ապահովել բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների շրջանառության եւ (կամ) դրանց հասանելիության պայմանները համադրելու հնարավորությունը,

5) առեստրային գաղտնիք չհանդիսացող տեղեկությունների ցանկը,

6) բողոքների, հայտերի քննարկման եւ բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիության հարցերի շուրջ ծագած վեճերի կարգավորման կարգը:

3. Սույն հոդվածի դրույթների կիրառման առանձնահատկությունները բնական մենաշնորհի կոնկրետ ոլորտներում՝ ներառյալ տարանցիկ փոխադրման հարցերը, կարող են սահմանվել համապատասխան ոլորտային (ճյուղային) համաձայնագրերով:

4. Թույլատրվում է Կողմ հանդիսացող պետությունների բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից Կողմ հանդիսացող պետությունների սպառողների նկատմամբ դիֆերենցիալ պայմանների կիրառումն իրենց ծառայությունների հասանելիությունից օգտվելու համար (բնական մենաշնորհի յուրաքանչյուր առանձին ոլորտի առանձնահատկությունների հաշվառմամբ, որոնք սահմանվում են ոլորտային (ճյուղային) համաձայնագրերով), եթե այդ պայմանները չեն կիրառվում Կողմ հանդիսացող ցանկացած պետությանը սպառողների պատկանելիության սկզբունքի համաձայն եւ պայմանով, որ պահպանվեն յուրաքանչյուր Կողմի ազգային օրենսդրության դրույթները:

5. Չհակասելով սույն հոդվածի 4-րդ կետի դրույթներին՝ Կողմերի ազգային օրենսդրություններում չպետք է ներառված լինեն այնպիսի նորմեր, որոնցով բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիությունից օգտվելու համար Կողմ հանդիսացող պետությունների սպառողների նկատմամբ կսահմանվեն դիֆերենցիալ պայմաններ՝ ելնելով Կողմ հանդիսացող ցանկացած պետությանը սպառողների պատկանելիության սկզբունքից:

Հոդված 7

Ազգային մարմինները

1. Կողմ հանդիսացող պետություններում գործում են Կողմերի այն ազգային մարմինները, որոնք օժտված են բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության նկատմամբ իրականացվող կարգավորման եւ (կամ) վերահսկողության լիազորություններով՝ Կողմերի ազգային օրենսդրության համաձայն:

2. Կողմերի ազգային մարմիններն իրենց գործունեությունն իրականացնում են Կողմերի ազգային օրենսդրության համաձայն՝ ելնելով սույն Համաձայնագրով, Կողմերի

ոլորտային (ճյուղային) համաձայնագրերով եւ Կողմ հանդիսացող պետությունների միջազգային պայմանագրերով սահմանված միասնական սկզբունքներից ու կանոններից:

3. Ազգային մարմինների գործառույթներին դասվում են.

1) բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների սակագնային (գնային) կարգավորումը,

2) բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիության կարգավորումը, այդ թվում՝ բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններում ընդգրկվելու (դրանց միանալու) համար վճարների (գների, սակագների, գանձումների) սահմանումը՝ Կողմերի ազգային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում,

3) բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների սպառողների շահերի պաշտպանությունը,

4) բողոքների, հայտերի քննարկումը, բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների համար կարգավորվող սակագների (գների) սահմանման ու կիրառման, ինչպես նաեւ այդ ծառայությունների հասանելիության շուրջ ծագած վեճերի կարգավորումը,

5) բնական մենաշնորհի սուբյեկտների ներդրումային ծրագրերի քննարկումը, հաստատումը կամ համաձայնեցումը եւ վերահսկողությունը դրանց իրականացման նկատմամբ,

6) առեւտրային գաղտնիքին վերաբերող տեղեկությունների՝ Կողմերի ազգային օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների պահպանման ապահովումը բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից,

7) բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելը նաեւ ստուգումների անցկացման միջոցով եւ այլ ձեւերով (մոնիթորինգ, վերլուծություն, փորձաքննություն),

8) Կողմերի ազգային օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթներ:

Հոդված 8

Համաձայնագրի կատարումը

1. Սույն Համաձայնագրի կատարումն ընկնում է ազգային մարմինների վրա:

2. Կողմերը միմյանց եւ Մաքսային միության հանձնաժողովին տեղեկացնում են իրենց ազգային մարմինների նշանակման եւ նրանց լրիվ անվանումների մասին 30 օրից ոչ ուշ՝ սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

3. Միասնական տնտեսական տարածքի փուլային ձեւավորման նպատակով Մաքսային միության հանձնաժողովն իրականացնում է հետեւյալ գործառույթները.

1) մշակում է առաջարկներ Միասնական տնտեսական տարածքի ձեւավորման՝ բնական մենաշնորհի ոլորտներին առնչվող փուլային նախագծի վերաբերյալ (ոլորտային (ճյուղային) կտրվածքով), ինչպես նաեւ մշակում է առաջարկներ Միասնական տնտեսական տարածքի փուլային նախագծի իրականացման նկատմամբ մոնիթորինգի անցկացման չափորոշիչների ու կարգի վերաբերյալ,

2) վերլուծում ու առաջարկում է բնական մենաշնորհի ոլորտներին առնչվող՝ ազգային մարմինների որոշումների համակարգման (մշակման ու իրականացման) եղանակներ,

3) անցկացնում է Կողմ հանդիսացող պետությունների բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման համակարգի ու գործունեության համեմատական վերլուծություն՝ ամենամյա զեկույցների ու հաշվետվությունների մշակմամբ,

4) նպաստում է բնական մենաշնորհի ոլորտներում կարգավորման գործընթացի ներդաշնակեցմանը էներգաարդյունավետության ու էկոլոգիական ասպեկտների մասով,

5) իրականացնում է ոլորտային (ճյուղային) համաձայնագրերով նախատեսված այլ գործառույթներ:

4. Մաքսային միության հանձնաժողովը սույն Համաձայնագրի կատարման համար իրականացվող աշխատանքների արդյունքները, Կողմերի ազգային մարմինների համաձայնությամբ, ներկայացնում է ԵվրԱզԷՍ-ի Միջպետական խորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմնի) ուսումնասիրությանը:

5. Բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորմանն առնչվող՝ Կողմերի ազգային օրենսդրության ներդաշնակեցման նպատակով ԵվրԱզԷՍ-ի Միջպետական խորհուրդը (Մաքսային միության բարձրագույն մարմինը), մաքսային միության Հանձնաժողովի ներկայացմամբ, սահմանում է Կողմերի՝ տվյալ ոլորտին առնչվող եւ մոտարկման ենթակա նորմատիվ իրավական ակտեր եւ այդ ոլորտին վերաբերող օրենսդրության ներդաշնակեցմանն ուղղված համապատասխան միջոցառումների իրականացման հաջորդականությունը:

6. Մաքսային միության հանձնաժողովին վերապահվում են սույն Համաձայնագրի իրականացումը վերահսկելու լիազորությունները:

ԲԱԺԻՆ 3.

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 9

Վեճերի լուծումը

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են Կողմերի միջև խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով, այդ թվում՝ Մաքսային միության հանձնաժողովի մասնակցությամբ, իսկ այդ խորհրդակցությունների կամ բանակցությունների մեկնարկի պահից սկսած վեց ամսվա ընթացքում համաձայնություն ձեռք չբերելու դեպքում շահագրգիռ Կողմերից որեւէ մեկը դրանք փոխանցում է Եվրասիական տնտեսական համայնքի դատարան:

Եվրասիական տնտեսական համայնքի դատարան դիմած Կողմը շահագրգիռ մյուս Կողմերին պետք է դրա մասին ծանուցի դիմելու պահից սկսած 30 օրը չգերազանցող ժամկետում:

Հոդված 10

Համաձայնագրում փոփոխությունների կատարումը

Կողմերի համաձայնությամբ՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են արձանագրությամբ:

Հոդված 11

Համաձայնագրի կիրառումը երրորդ երկրների նկատմամբ

Սույն Համաձայնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես պարտավորեցնող, որպեսզի Համաձայնագրի ցանկացած Կողմ սույն Համաձայնագրից բխող կանոնները եւ

(կամ) առավելությունները տարածի սույն Համաձայնագրի մասնակից չհանդիսացող երրորդ պետությունների կամ այդ երրորդ պետությունների տնտեսավարող սուբյեկտների վրա:

Հոդված 12

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու կարգը

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմերի կողմից կատարելու մասին ավանդապահի կողմից վերջին ծանուցումն ստանալու օրվանից:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2010 թվականի դեկտեմբերի 9-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական ընկերակցության ինտեգրացիոն կոմիտեում, որը, լինելով սույն Համաձայնագրի ավանդապահը, յուրաքանչյուր Կողմի կտրամադրի իր վավերացված օրինակը:

Բնօրինակի պատճենները վավերացվում են Եվրասիական տնտեսական համայնքի ինտեգրացիոն կոմիտեի կողմից եւ ուղարկվում յուրաքանչյուր Կողմի:

(ստորագրություններ)

Հավելված 1

**«Բնական մենաշնորհի սուբյեկտների
գործունեության կարգավորման միասնական
սկզբունքների եւ կանոնների մասին»
համաձայնագրի**

ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀԻ ՈԼՈՐՏՆԵՐԸ ԿՈՐՄ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

	Բելառուսի Հանրապետություն	Ղազախստանի Հանրապետություն	Ռուսաստանի Դաշնություն
1	նավթի եւ նավթամթերքի տրանսպորտային փոխադրումը գլխավոր խողովակաշարերով	գլխավոր խողովակաշարերով նավթի եւ (կամ) նավթամթերքի տրանսպորտային փոխադրման ծառայություններ	նավթի եւ նավթամթերքի տրանսպորտային փոխադրումը գլխավոր խողովակաշարերով
2	էլեկտրաէներգիայի փոխանցում եւ բաշխում	էլեկտրաէներգիայի փոխանցման եւ (կամ) բաշխման ծառայություններ	էլեկտրաէներգիայի փոխանցման ծառայություններ
3		էլեկտրաէներգիայի սպառման եւ ցանց բացթողման տեխնիկական դիսպետչերական աշխատանքների գծով ծառայություններ, էլեկտրաէներգիայի արտադրության եւ սպառման միջեւ հավասարակշռության ապահովման ծառայություններ	էլեկտրաէներգիայի սպառման եւ ցանց բացթողման տեխնիկական դիսպետչերական աշխատանքների գծով ծառայություններ, էլեկտրաէներգիայի արտադրության եւ սպառման միջեւ հավասարակշռության ապահովման ծառայություններ
4	Երկաթուղային տրանսպորտով հաղորդակցության ծառայություններ, որոնք ապահովում են ընդհանուր օգտագործման տրանսպորտի շարժը, գնացքների շարժի կառավարումը, երկաթուղային փոխադրումների իրականացումը	միջառաքային երկաթուղային ցանցերի ծառայություններ	երկաթուղային փոխադրումներ

Հավելված 2

**«Բնական մենաշնորհի սուբյեկտների
գործունեության կարգավորման միասնական
սկզբունքների եւ կանոնների մասին»
համաձայնագրի**

ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀԻ ՈԼՈՐՏՆԵՐԸ ԿՈՐՄ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

	Բելառուսի Հանրապետություն	Ղազախստանի Հանրապետություն	Ռուսաստանի Դաշնություն
1	գազի փոխադրումը գլխավոր եւ բաշխման խողովակաշարերով	գազի կամ գազի կոնդենսատի պահման կամ գլխավոր եւ (կամ) բաշխման խողովակաշարերով փոխադրման, գազաբաշխիչ կայանների ու դրանց հետ կապված գազաբաշխիչ գազամուղների շահագործման ծառայություններ	գազի փոխադրումը խողովակաշարերով
2	տրանսպորտային տերմինալների օդանավակայանների ծառայություններ, օդային ուղիների մատակարարում ու շահագործում, օդային շարժի կառավարում	օդային նավիգացիոն ծառայություններ, նավահանգիստների, օդանավակայանների ծառայություններ	տրանսպորտային տերմինալներում, նավահանգիստներում եւ օդանավակայաններում մատուցվող ծառայություններ
3	ընդհանուր օգտագործման էլեկտրոնային կամ փոստային կապի ծառայություններ	հեռահաղորդակցության ծառայություններ տեխնոլոգիական անհնարինության պարագայում կապի մրցակցային օպերատորի բացակայության կամ տվյալ տեսակների ծառայությունները՝ տնտեսական տեսանկյունից ոչ նպատակահարմար լինելու պատճառով չմատուցելու պայմանով՝ բացառությամբ հեռահաղորդակցության համընդհանուր ծառայությունների, գույքային վարձակալման (վարձակալության) տրամադրման կամ	էլեկտրոնային ու փոստային կապի՝ հանրությանը մատչելի ծառայություններ

		կաբելային կոյուղու կամ ընդհանուր օգտագործման հեռահաղորդակցության ցանցին հեռահաղորդակցության ցանցերը միացնելու հետ տեխնոլոգիապես կապված այլ հիմնական միջոցների օգտագործման ծառայություններ, փոստային կապի՝ հանրությանը մատչելի ծառայություններ	
4	ջերմային էներգիայի փոխանցում եւ բաշխում	ջերմային էներգիայի արտադրության, փոխանցման, բաշխման եւ (կամ) մատակարարման ծառայություններ	ջերմային էներգիայի փոխանցման ծառայություններ
5	կենտրոնացված ջրամատակարարում եւ ջրահեռացում	ջրային տնտեսության եւ (կամ) կոյուղու համակարգերի ծառայություններ	
6			ներքին ջրային ուղիների ենթակառուցվածքի օգտագործման ծառայություններ
7		կոնցեսիոն պայմանագրերի հիման վրա երկաթուղային տրանսպորտի օբյեկտների միջոցով մատուցվող երկաթուղային ուղիների ծառայություններ	
8		մերձատար ուղիների ծառայություններ	